ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 97-Ն

«14» սեպտեմբերի 2021 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքների միավորման գործընթացը, այլ համայնքների հետ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի միավորման նպատակահարմարության հարցը, արտահայտելով համայնքի բնակչության դիրքորոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակ մարզի Մարմաշեն համայնքի բնակչությանը ուղղված ուղերձ՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ՀՀ Ազգային ժողովին ուղղված ուղերձ՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------

Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Կ. ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Զ. ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«14» սեպտեմբերի 2021 թվական
գյուղ Մայիսյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի
Մարզի Մարմաշեն համայնքի ավագանու
«14» սեպտեմբերիի 2021 թվականի
N97-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի հարգելի բնակիչներ,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին քննարկելով համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով Մարմաշեն համայնքի բնակչության շրջանում տիրող գերակա տրամադրությունը այլ համայնքների հետ Մարմաշեն համայնքի միավորման գործընթացի նկատմամբ,

Հաշվի առնելով, որ այլ համայնքների հետ միավորումը նվազեցնում է համայնքի բնակչության ներկայացուցչական մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,

Միավորումը համայնքի համար լրացուցիչ ֆինանսական հնարավորություններ կամ նոր լիազորություններ չի առաջացնում, նվազեցնում է մինչ այս ունեցած ռեսուրսների ինքնուրույն ու սեփական պատասխանատվությամբ տնօրինումը հանուն Մարմաշեն համայնքի բնակիչների բարեկեցության,

Միավորման առաջարկի նախագծում հստակեցված չէ միավորան հանրային շահը,

Մարմաշեն համայնքի ավագանին արտահայտելով իր կանխորոշիչ դիրքորոշումը, հայտարարում է, որ նպատակահարմար չի համարում համայնքի միավորումը որևէ այլ համայնքի հետ:

Որպես Մարմաշեն համայնքի ներկայացուցչական մարմին, համայնքի ավագանին, վստահեցնում է, որ կիսելով համայնքների միավորման գործընթացի նկատմամբ բնակչության գերակայող կարծիքն ու դիրքորոշումը, ղեկավարվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասություններով՝ ներկայացնելով համայնքի ողջ բնակչության շահերը:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԱՐՇԱԿՅԱՆ**

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Մարմաշեն համայնքի ավագանու
«14» սեպտեմբերի 2021 թվականի
N97-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ՈՒ Ղ Ե Ր Ձ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին, որպես ներկայացուցչական մարմին, քննության առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնված համայնքների միավորման գործընթացը, հաշվի առնելով այդ գործընթացի նկատմամբ համայնքի բնակչության գերակշռող կարծիքը, նպատակահարմար չի գտնում Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի միավորումն այլ համայնքի կամ համայնքների հետ:

Համայնքի ավագանին ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և ՀՀ Ազգային ժողովը կլսի համայնքի կարծիքը համայնքների միավորման գործընթացի մասով, կապահովի Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 5-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածով սահմանված համայնքների լսված լինելու իրավունքի իրացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԱՐՇԱԿՅԱՆ**

Հիմնավորում

Համայնքների միավորման գործընթացում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտող համայնքի բնակչությանն ու ՀՀ կառավարությանն ու ՀՀ Ազգային ժողովին ուղղված ուղերձների ընդունումը բխում է համայնքի ավագանու կարգավիճակից, համայնքների միավորմանը Մարմաշեն համայնքի ավագանու դիրքորոշումն արտահայտելու անհրաժեշտությունից՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով:

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների վրա ազդեցության մասին

Սույն որոշման նախագիծը համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների փոփոխություն չի առաջացնում: